

## Հայտարարություն

### Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու մասին

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանը հայտարարում է **արտաքին մրցույթ**՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 93-3.3-Մ3-1), քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 93-3.3-Մ3-1) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկությունները ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ <http://armavir.mtad.am/files/docs/52481.pdf>:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 93-3.3-Մ3-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները դիմումները ներկայացնում են էլեկտրոնային տարբերակով: Դիմումներն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու համար անհրաժեշտ է այցելել <https://cso.gov.am> պաշտոնական կայքէջ, լրացնել նշված կայքէջի «Գլխավոր էջ»-ի «Մրցույթների հայտարարություններ» բաժնի «Ղեկավար և մասնագիտական պաշտոններ» ենթաբաժնի համապատասխան մրցույթի տողում զետեղված դիմումը, որից հետո անհրաժեշտ է լրացված դիմումին կցել անհրաժեշտ փաստաթղթերի լուսապատճենները և ներբեռնել լուսանկարը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 93-3.3-Մ3-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում.
2. անձնագիր և/կամ նույնականացման քարտի լուսանկար (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի կցվում, ապա անհրաժեշտ է կցել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանքի կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանքի լուսանկար),
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի(երի) լուսանկար(ներ),
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի(ների) լուսանկար(ներ),
5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի լուսանկար,
6. լուսանկար՝ 3X4 չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2021 թվականի մարտի 2-ից մինչև 2021 թվականի մարտի 9-ը՝ ժամը 24.00-ն: Դիմումներն ընդունվում են քանաչորսժամյա ռեժիմով:

**Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2021 թվականի ապրիլի 7-ին՝ ժամը 11:00-ին, Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Տերյան 89):**

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2021 թվականի ապրիլի 9-ին՝ ժամը 11:30-ին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի վարչաան շենքում (հասցե՝ ք. Արմավիր, Աբովյան 71):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի <<Հարցարան>> ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 175932 (մեկ հարյուր յոթանասունհինգ հազար ինը հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

<<Սահմանադրություն. հոդվածներ՝ 1-8, 10, 13-14, 16-18, 20-21, 25, 27, 31, 32, 35-38, 40-41, 44, 46-49, 51, 57, 58, 64, 66, 70, 72-73, 103, 179-180, 182-184

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 4, 6-11, 13, 16-21, 37

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=138910>

<<Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին>> ՀՀ օրենք. հոդվածներ՝ 2, 3, 5, 6, 9

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=138982>

«Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենք. հոդվածներ 3, 4, 5, 7, 12, 22, 23

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141302>

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 2, 6, 9, 10, 32, 35, 36, 37, 38

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142147>

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք. Հոդվածներ՝ 5, 6, 7, 8, 9

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=150050>

<<Երեխայի իրավունքների մասին>> ՀՀ օրենք, հոդվածներ՝ 3, 4, 5, 6, 8, 17, 18

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149836>

<<Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին>> ՀՀ օրենք, հոդվածներ՝ 2, 3, 7, 8

հղումը՝ <https://www.arlis.am/documentView.aspx?docid=90804>

<<Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին>> ՀՀ օրենք. հոդվածներ՝ 3, 4, 5, 6, 11, 12, 13, 14

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131554>

<<Սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենք. հոդվածներ՝ 2, 5, 6, 8, 16, 17, 18, 21, 23, 24, 25, 38

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=139019>

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 3, 5, 9, 11

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1372>

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 5, 12, 10

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118672>

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք. հոդվածներ՝ 51, 55, 56, 59, 62, 63, 69, 71, 106, 108, 111, 135, 142, 163, 168, 170, 173, 205, 207, 290, 294, 322, 331, 332

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=148978>

<<Տարածքային կառավարման մասին>> ՀՀ օրենք, հոդվածներ՝ 6, 5, 7, 5, 9, 12, 13, 14, 15

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=147130>

Ընտանեկան օրենսգիրք, հոդվածներ՝ 1, 45, 75, 98, 121, 140, 144, 147, 152

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138955>

Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երեւան 2012:

հղումը՝ <http://fliphtml5.com/fumf/egdx>

«Գրավոր խոսք», Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012 թ., էջեր՝ 70-129,

հղումը՝ <http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf>:

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ <https://www.gov.am/am/announcements/item/346/> հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ք. Արմավիր, Աբովյան 71, վարչական շենք, հեռախոսահամար՝ 0237-2-16-29, էլեկտրոնային փոստի հասցե՝ [armavir.andznakazmi.karavarum@gmail.com](mailto:armavir.andznakazmi.karavarum@gmail.com) )